Ներկայ գործը իւր համառօտութեամբ կարդացուած է նախապէս Լենինգրադի Նիւթական Կուլտուրայի Պատմութեան Ակադեմիայում, եւ նուիրուած է նոյն հասատատութեան նախագահ, ճանաչուած հայագէտ եւ մեծ աշխատաւոր ակադեմիկ Ն. Մառի յիշատակին: Սա մի երախտագիտական նուաստ արտայայտութիւն է բարեկամական այն բոլոր օգնութիւնների հանդէպ, որ ստացել ենք մեր աշխատանքների ժամանակ նորա կողմից: Հէնց նորա առաջարկութեամբ ենք սկսել Գեղարդի եւ Աղջոց Ս. Ստեփանոս վանքերի, ինչպէս եւ Հաւուց Թառի, արձանագրութիւնների կարգաւորեալ հաւաքումն ու վերստուգութիւնները, իբրեւ անդամ նորա գլխաւորութեամբ կազմուած գիտական արշաւանքի «Տրդատայ Թախտ»-ի պեղման եւ ուսումնասիրութեան ժամանակ. Տիխոնովի եւ Սմիրնովի լուսանկարները էլ հանուած են այդ ժամանակ, որոնք նոյնպէս մասնակից էին այդ արշաւանքին: Սահմանափակ նպատակով սկսուած աշխատութիւնը, յետագայում ընդարձակ ծաւալ եւ բովանդակութիւն է ստացել «Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց Պատմութեան մէջ» աշխատութեամբ, եւ առանձին՝ ներկայ հատորով: Նորա բարեկամական զնահատութեանն ենք պարտական, որ Ս. Պետերբուրգի նախկին Կայսերական Հնագիտական Ընկերութեան անդամ ընտրուելու պատուին էինք արժանացած, ինչպէս եւ Գիտութեանց Ճեմարանի պատշաճական յանձնարարականով դիւրացուած էր մեր ուսումնական նանապարհորդութիւնը Փ. Ասիայում: Վերջապէս նորան ենք պարտական, որ Լենինգրադի ներկայ Նիւթական Կուլտուրայի Պատմութեան Ակադեմիան որոշել է հրատարակել մեր Հայ Մանրանկարչութեան մեծածախս եւ գունազարդ քարտէզը:

Բայց պարտաւորութիւն ունիմք շնորհակալութիւն յայտնելու եւ հատորիս հրատարակութեան ծախսերը հոգացող, Կայիրէաբնակ շնորհափայլ Տ. Տ. Անանա Պուրոս Կալիի, Սաթենիկ Զագրի եւ Նուարդ Եաղուպեանի, Ամերիկայեցի Տ. Թորգոմ Ս. Պատրիարքի միջնորդութեամբ. առանց այս օգնութեան անյայտ կ'մնար այս աշխատութիւնը շատ երկար ժամանակ բանասիրութեան, ինչպէս ուրիշները:

Մեր ի սրտէ շնորհակալութիւնն ենք յայտնում ի վերջոյ Ս. Յակոբեանց տաճարի Լուսարարապետ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Նշանեանին, որ անձնուիրաբար յանձն է առել այս գործի բարդ եւ դժուարին սրբագրութեան պարտականութիւնը:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԻՍԲԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Զիկագոյ

Յունուար, 1937